

ՄՈՒՐԱՑԱՆԻ «ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԻԱՆՉԱՌՈՒՅՈՒ» ԽՈՐՀՈՒՐԴ\*

Զինադիտա Բալայան

Հին հունական արվեստի, գրականության համահավաք փորձը գետեղված ենք տեսնում գեղագիտական, գրականագիտական տեսական ընդհանրացումների կորող հանդիսացող՝ «Պոետիկայում», որում Արիստոտելը այլ սկզբունքային հարցադրումների հետ նաև նշում է գրողի եւ պատմաբանի կոչման մասին՝ դիտելով, թե պատմաբանի խնդիրը վաղուց եղած, կատարվածի մասին խոսելն է՝ եղած փաստերը վերիամեմ, գրողի խնդիրը՝ ինչ կարող է լինել՝ ըստ հավանականության կամ անհրաժեշտության՝ ցանկալի, երեւակայելի, աներեւակայելի:

Այս մտաեւեռումը իրականացված ենք տեսնում Մուրացանի «Խորհրդավոր միանձնուիի»-ում: Թենան >XIX դարի 60-ական թվականները ներկայացնող Սյունիքն է, լուսավորության, մշակութային, գրականության, արվեստի կենտրոն հանդիսացող Շուշին, որը միաժամանակ համարվել է «Անդրկովկասի բանալի» (Ապրես Բեկնազարյան), «Արվեստների օազիս» (Մարիեսա Շահինյան) եւ այլն:

Արցախը՝ որպես պատմաաշխարհագրական սուբյեկտ, հայ մշակույթում և գրականության մեջ հայտնագործվում է XIX դարում:

XIX դարի Արցախի մշակույթի պատմության մեջ իր ժամրատեսակներով, ծրագրայնությամբ, տարաբնույթ հարցերի առաջադրմամբ առանձնանում է գրականությունը, որի թեմատիկ տարրերակումներն ամբողջանում են ազգային-ազատագրական պայքարի արտացոլանքներով, ազգային գաղափարակառույցի շերտերը ներկայացնող երկերի ստեղծմամբ. այն հատկապես երեւում է Մուրացանի «Նոյի ագրավը», «Առայլը», «Խորհրդավոր միանձնուիի» ստեղծագործություններում:

Գյուղի եւ գյուղացիության ճակատագրի հարցերը, բարոյականի խնդիրները, նրան խսպարհ հանելու, լուսավորելու գաղափարները հայ գրողներից շատերի, այդ թվում նաև Մուրացանի ստեղծագործության արժեքավոր ու գաղափարապես հարուստ, մնայուն մասն են կազմում, եւ որի քննության առանցքներն է ներկայացնում նաև «Խորհրդավոր միանձնուիի»:

Ազգային ավանդույթների լավագույն շերտերը, տոհմիկ հոգեքանությունը, նահապետական էթիկական հարցադրումները, էթնիկ առանձնահատկությունները, մտախարճնվածքի պարզ, պարզության մեջ հետաքրքիր երանգներ կրող հայ գյուղը, գյուղացիությունն այն միջավայրն ու սոցիալական տարրերն են, որոնք մոռացության թմբիրի մեջ են հայտնվել մտավոր գործողների անտարբեր պահվածքից, նրանց երկերեսանիությունից՝ ավելի երկինություն իրենց մեկուսացվածության մեջ:

Խորհրդավոր միանձնուիի» գրի գիխավոր հերոսներից քոյր Աննայի վարքը առինքնել է Մուրացանին. «Սեր այս ինքնապաշտ ժամանակում, երբ անձնվիրությունը դարձել է անգյուտ, ըստ որում մարդիկ նրա պաշտամունքը հատկացրել են անձնասիրության, այդ կինն յուր սերի մեջ միակն էր ու առաջինը, որ հասարակաց բարվույն նվիրվելու ժամրագույն խաչն ստանձնեց» եւ ապա՝ «Քոյր- Աննայի մեռնելով մենք

\* Հոդվածն ընդունվել է 10.04.2015:

Հոդվածը տպագրության է երախավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

կորցնում ենք մինն այն գերազանց ուժեղից, որոնք ծնունդ էին առել 60-ական թվականներին, որոնց սակայն արժանավոր հետևողներ չգտնվեցան մինչև այսօր։ Սա մի անդառնալի կորուստ էր...»[1]:

Ինչու՞ է Մուլացանը երկի գրման ժամանակը «ինքնապաշտ» համարում, «անձնվիրությունը՝ անգուտ», Աննային՝ «յուր սերի մեջ միակն ու առաջինը» եւ որի «մերնելով մենք կորցնում էինք մինն այն գերազանց ուժեղից», ովքե՞ր էին հատկանշում «վայրունական թվականների սերունդը», որի «գերազանց» ուժեղից էր Աննան, եւ ինչու՞ նրանք «արժանավոր հետևողներ» չունեցան «մինչև այսօր»։ ինչու՞ է գեղագետը «անդառնալի կորուստ» համարում այն։

Գրականության, լուսավորության զարգացման ընթացքը հատկանշական էր Արցախի հասարակական կյանքին, հատկապես Շուշիի նկարագրին, որը «սպառնացել» է Անդրկովկասում (Էջմիածին, Թիֆլիս, Երևան) առաջինը դառնալու։

Այս տեսանկյունից հատկապես XIX դարի 60-ական թվականները դարձան լուսավորության, հեղաշրջումի դարաշրջան, իսկ Ուսաստանում՝ համարյա նոյն ժամանակաշրջացքում այն փաստվեց «նարոդնիկական շարժում» արտահայտությամբ։ Զուգահեռենք պատմաբանի եւ վիպասանի խոհածումները հարցի կապակցությամբ։ Բ. Ուկուբարյանը դիտում է. «1863թ. թեմական դպրոցի տեսուչ նշանակվեց ժամանակի հայկական լուսավորական գործի նշանավոր կազմակերպիչ, բազմակողմանի եւլուպական կրթությամբ զինված եւ բնական ծիրերի տեր Պետրոս Շանշյանը, որի տեսչության ընթացքում բավական մեծ առաջնորդաց արձանագրվեց, հատկապես հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության, հայրենասիրական դաստիարակության տեսանկյունից»[2]:

Ծեշտենք՝ Պ. Շանշյանը հեղինակություն էր Շուշիում, եւ բոլորի կողմից վայելում էր մեծ սեր ու հարգանք։

Սուլացանի երկում Գարեգինից «մերժված» Աննան հետեւյալն է պատմում իհշատակարանագրին, ով տվյալ դեպքում Մուլացանն է՝ 60-ականների ժամանակակիցն ու սերնդակիցը։ «Հոգևոր դպրանոցի վարժապետական հին խմբի և նրանց պաշտպանների լարած մեքենայությունները վերջապես հաջողվել են, որով և նոր խումբը մնացել է ներ դրության մեջ, որ հակառակորդներից ու դավադիրներից կազմակերպված բանակը կարողացել է ժողովրդի ամեն խավերում տարածել և շատ շատերին համոզել թե՝ վարժապետական նոր խումբը բողոքականություն է քարոզում աշակերտներին, անբարոյականացնում է նրանց, կամ թե ծնողների դեմ ապստամբեցնում»[3]:

Ի՞նչ խմբերի մասին է խոսքը. անշուշտ, լուսավորչական, կրթական նոր շարժումն առաջնորդող Պ. Շանշյանի եւ հին խմբի։ Ուկուբարյանը փաստագրում է. «Սակայն քնած չէին եւ մոլոր ուժերը, որոնք 1864-ին մի գրպարտագիր հղեցին Էջմիածին, կաթողիկոս Մատթեոսին, եւ նա էլ Շանշյանին տեսչությունից հանելու իր կոնդակն ուղարկեց Շուշի»[4]:

«Այս անխիղձ գրպարտությունները, - նկատում է Աննան, - որոնք միշտ անազնիվ մարդկանց գենքերն են եղած ազնիվ հակառակորդների դեմ, ուոքի էին հանել քաղաքում սինթրոր խումբանը, որ ... գոչում էր թե՝ «խաչ հանեցեք դրանց»»[5]:

Ցավոք, հոգեւոր առաջնորդներից քչերն էին առաջադիմության պաշտպան։ այդպիսինն էր Բաղրամար Մետրոպոլիտը, որի վարքը միմիայն մեծ պաշտամունքի էր արժանացել Արցախի հանրության կողմից։

## ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Իսկ այս մեկը՝ կաթողիկոս Մատթեոսը, լրիվ հակապատկերն էր Բաղդասար Մետրոպոլիտի: Աննան շարունակում է յուր խոսքը՝ ընդգծելով հոգեւոր առաջնորդի փոքրոգությունը, չարին կողմնակից լինելու նրա դիրքորոշումը. «Այս գրպարտության ու խառնակության ձայներն էջմիածին հասնելով համոզել էին նաև Մատթեոս կաթողիկոսին՝ արձակել տեսչին յուր վարժապետներով»[6]:

«Սակայն այս անգամ հոգաբարձուները մի ընդարձակ նամակով պաշտպանեցին իրենց տեսչին՝ հրապարակի վրա դնելով նրա երախտալից գործունեության մանրամասներն, խելահասությամբ, պահանջեցին ջնջել լոկ մուռ ուժերին ընդառաջող այդ կոնդակը»[7], - գրում է Ուլուբարյանը՝ ընդգծելով Շանշանի հանդեպ իր աշխատակիցների տաճած սերն ու հավատը:

Խոստող Աննան է, բայց որը դեպքերին ականատես Մուրացանն է շարադրում: Նա ներկայացնում է նոր ուժերին. «Պատմում էին թե՝ որպիսի աղիողորմ տեսարան էր ներկայացնում այդ ժամանակ հազիվ բարեկարգ դրության հասած այդ ուսումնարանը, որին նորեն սպառնում էր ավերումը»[8]:

Անդրդպելի կաթողիկոսը հետամուտ էր Պ.Շանշանին հեռացնելու թեմականի տեսչությունից. «Մատթեոս կաթողիկոսը, - նշում է Ուլուբարյանը, - իսկապես ընդառաջելով Շուշվա մութ ուժերին, նոր մի կոնդակ էլ ուղարկեց այնտեղ եւ Շանշանին հեռացրեց տեսչությունից: Հոգաբարձուները նոր մի համախոսականով պաշտպանեցին արժանավոր տեսչին: Համանման համախոսականներ գրեցին նաեւ ուսուցիչները, սամերը, քաղաքի պատկառելի մարդիկ, - անշուշտ, հեշտությամբ չեր գնում լուսավորության գործը, ընդակարակը՝ խարդավանքներով. սակայն հայոց եկեղեցու այդ ինքնարավությունից տրաքվող պետոր մնաց անդրդպելի, եւ Կրօպախական աշխարհի նոր լուսավորիչը հեռացվեց աշխատանքից, գնաց թիֆլիս: Նոր կողմնակիցները հալածական դարձան Մատթեոս կաթողիկոսի դրածոների սադրանքներից»[9]:

Իրավամբ, լեռն Պ. Շանշանի վարքը անվանում է «սրբազն ավանդություն»[10]:

Աննան ավելացնում է. «...տեսուչը հանձնելով դպրոցը յուր հավատարիմներին, նա առավ յուր հետ Գարեգինին... զնաց Էջմիածին՝ իրերի դրությունը Մատթեոս կաթողիկոսին ծանոթացնելու համար: Բայց... ապարդյուն անցավ. հուսահատ, վշտահար վերադարձավ նա թիֆլիս՝ յուր հայրենիքը: Մինչդեռ Գարեգինը նորեն եկավ մեր քաղաքը՝ յուր սիրելի «քուրաստանը», վերջին անգամ տեսնելու և յուր ծեռնասուն աշակերտներին վերջին հրաժեշտի ողջոյնը տալու»[11]:

Քոյսր-Աննայի մայրը՝ Շուշիի քաղաքաբետի օգնական Սիմոն բեկի կինը, եւս ընդգրկված էր Ս. Հախումյանի խմբի բարեգործական նախածերնություններին. «Սենք բոլորս էլ համաձայն էինք նոր բացվելիք օրիորդական դպրոցում նորից աշակերտելու, եթե միայն մեր ուսուցիչը Գարեգինը լինել, - ասում է Աննան, ապա շարունակում, - Շատ չանցավ, դպրոցի բացման օրն էլ հասավ: Այստեղ էր սրբազնը՝ յուր քահանաներով, տեսուչ՝ յուր վարժապետական խմբով, ընդունված աշակերտուիկներն՝ իրենց ծնողների հետ, դպրոցի բացման նպաստող պատվավոր քաղաքացիներն ու նրանց կանայք-դպրոցի նորընտիր խնամակալուիկները, որոնցից մինն էր և մայրս, ապա ուսանողներ, արհեստավորներ և ուրիշ շատերը»:

Շուշիի Մարիամյան դպրոցի բացման հիշողություններից ոգեւորված՝ միանձնութին ավելացնում է. «Տեսուչը, որ յուր վեհ կերպարանքով գրեթե սուրբի տպավորություն էր անում մեզ վրա, յուր այդ ճառով վարեց ներկա եղողներին, որ բացի առատ նվերները, որ ստորագրեցին նրանք անդրամիկ դպրոցի օգտին, այլև քառասունից ավելի տիկնայք որդեգրեցին աղքատներից մի-մի որդեգրուիի: Նույնիսկ առաջնորդը

## ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

հետևեց կանանց օրինակին: Այսպիսով ծնունդ առավ մեր քաղաքի... օրիորդական դպրոցը, որ կնքվեցավ Ս. Մարիամյան անունով»[12]:

Մուրացանը հրաշալի է վիպականացրել ԽIX դարի Արցախ աշխարհի մշակութային կյանքը՝ տալով նրա նկարագիրը՝ 60-ականների սերնդի լուսավորչական մեջ շարժումը, այն խոչընդոտող սեւ, ազգադավ հոսանքը:

«Խորհրդավոր միանձնուիին», վիպական գրվածք լինելով, յուր կողմից որպես սկզբնադրյուր է ծառայել ուսումնասիրողների համար՝ այս դիտանկյունից եւս համույսանալով ոչ միայն գրական, այլև հայագիտական, մշակութային մեջ արժեքը:

«Խորհրդավոր միանձնուիին» հերոսները գաղափարակիրներ են՝ բարձագույս հոգեկերտվածքով, կյանքի երեւույթների հանդեպ փիլիսոփայական մտահանգումներով, որը գալիս է Մուրացանի գեղարվեստի հոգեբանական-զգացական ներսուզումներից, զգացմունքների խորախորհուրդ շերտերից, գաղափարական եղաղթույթներից, անձնուրացության իմաստափարական հայեցումներից, գեղարվեստի անկրկնելի առանձնահատկություններից:

Մուրացանը միտումնավոր արվեստագետն է՝ ներքնատեսի նրբին դրսեւորումներով, կերպարների առանձնափառությունությամբ, ընդգծված գեղապաշտությամբ, որը փիլիսոփայական խորը ներսուզումներ է մեկնում, որի բարձրակետը սիրո հավիտենական արենդվածն է: Պատմական կոնկրետ միջավայրի, կոնկրետ հասարակարգի դիպահարդարման օրինակ է «Խորհրդավոր միանձնուիին»: Նրա գաղափարները, գյուղն ու գյուղացիությունը լուսավորելու, կրթելու առաքինության մեջ նվիրյալների՝ ուսուցիչ Գարեգինի եւ քոյր-Աննայի գաղափարապես հարուստ անհատների անձնվիրությամբ ազգին ծառայելու մեծագույն սիրանք է հիշեցնում, իսկ գյուղափրկիչ ծրագրերը՝ արդիական հրատապ տնտեսական բարենորդումներ, որոնց այսօր էլ կարուտ է գյուղը:

Ամուսնական սերը հայրենիքի սիրուն գոհելու գաղափարն է ընկած «Խորհրդավոր միանձնուիի» վեպում, գիրք՝ լի խորհուրդներով, գարմանագյուտ հերոսներով, վեմ ու ոգեղեն անձնուրացներով, լուսավորության անմահ հեղափոխական-ջահակիրներով:

«Խորհրդավոր միանձնուիին» բարձր գեղարվեստի արտահայտություն է, արարվել է մեծ գեղարվեստագետի գրչով, անհատական ինքնատիպ ոճով: Այն արտացոլում է գրողի գեղարվեստական մտածողության տեսակը՝ բարդ հոգեբանական շերտերով, որը միմիայն Մուրացանին է՝ բոլորից արանձնադիտվող:

«Ամեն մի գրողի ոճն այնպէս սերտորեն կապված է նրա հոգու բովանդակության հետ, որ փորձարու հայացքը հոգին կարող է տեսնել ըստ ոճի»[13]- անհատական ոճը բնութագրող այսպիսի տողեր ունի Ա. Բլոկը, որը լավագույն է բնութագրում նաև Մուրացան ստեղծագործողի ոճը, հոգու խորությունը, գաղափարների համակարգը՝ իհանակի կերպով արտահայտված «Խորհրդավոր միանձնուիի»-ում, ամբողջացված երկի գաղափարակիրների՝ գործող ուսուցիչ Գարեգինի եւ գործող միանձնուիի քոյր-Աննայի կերպարներում: Նրանց գաղափարամեկնումները՝ ազգային բարձր արժեքների շուրջ, լուսավորական ծրագրերը, բարոյականի սկզբունքները, անձնագործության տրվածքները Մուրացանի ոգու խորության, բարոյականության, էթիկետի արտացոլանքներ են դիտվում, հոգու գեղարվեստական ճշնարտությունը՝ արտահայտված գեղարվեստում՝ որպես «Խորհրդավոր միանձնուիի» գեղագիտական կարեւորագույն օրինաչափություն:

Անշուշտ, երկն ունի արդիական շերտեր՝ ուղղված թե՛ հասարակությանը, թե՛ մարդկությանը, որոնք իրավունք են վերապահում երկին ստեղծագործորեն եւ գոյա-

## ՄԵՍՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

բանորեն ձեռք բերելու երկարատեւ, հավերժորեն ապրող կարգավիճակ, քանզի երկի գաղափարները տարբեր հասարակարգերում տարբեր կերպ կընկալվեն, տարբեր գնահատության կարժանանան՝ նայած գրականագիտական պահանջներին, բայց միշտ կինըն անգերազանց՝ հայ գյուղացու ազգային նկարագրի ամբողջացում, հայ գյուղի սքանչելի եւ օրինակելի տեսլական՝ հավանականության շերտերով:

Գեղարվեստական ստեղծագործության իր յուրատիպերն է ստեղծել Մուրացանը եւ մոդելավորել նրանց. Գարեգին, քոյր-Աննա: Թերեւս նրանց շերտավորված ենք տեսնում «Ես՝ մենք բոլորս ենք» (անձ եւ մարդկություն հարաբերություն), «Ես՝ ամեն ինչ եմ» (անձ եւ բնական միջավայր), «Ես՝ մեր ամբողջ ստեղծածն եմ» (անձ եւ ծերակերտ «Երկրորդ բնույթուն»), «Ես՝ ամեն, ամեն ինչ եմ» (մարդ եւ տիեզերքը) մտասեւեռում-ները՝ ամբողջացված-փիլիսոփիայական-լուսավորչական-պատմական, բնափիլիսոփիայական, ստեղծաբանական-գեղագիտական-բարոյագիտական եւ կեցություն-զաղակար-էություն փիլիսոփիայական-մետաֆիզիկական բարձր արդյունաբերի շեշտադրումներում, որոնք ներկայացնում են Մուրացանի գեղարվեստի հումանիստական, բարոյական, լուսավորչական բնույթը եւ դրանց էությունը՝ ազգային ու համազգային որակումներով:

«Խորհրդավոր միանձնուիհի» երկի տիպարանական գեղարվեստակոնցեպտուալ (կոնցեպտ (լատ.)-հղանալ, հղացք, մտահղացում) համակարգից եկնելով՝ բնորոշում ենք նրա գրական ռոմանտիկական ուղղության պատկանելը:

«Խորհրդավոր միանձնուիհի»-ում առաջադրված գյուղի եւ գյուղացիության լուսավորության, նրան բարոյական կենդանություն տալու, տգիտությունից փրկելու կարեւոր հարցադրումները արդիական հնչեղություն ունեն, հրատապ են, որպես գրականության խնդիրներ՝ գիտական բնույթ են կրում:

Քոյր - Աննան՝ գաղափարակիր Գարեգինի էությունը՝ իր կերպարային խորհրդավոր, լիրիկական դրսեւորումներով, քայլում է գեղեցիկ պարադիզմաների (պարադիզմա (հուն.)- տեսություն, մոդել, պատկերացում, հասկացություն, տեսակետների համակարգ) պատկերապահով, եւ իր հոգեբանական մտավոր, մարմնավոր, արվեստական մեծ սիրո, խառնվածքային կանացի բնույթով ներկայացնում վեհի սահմանները՝ անպայմանորեն այդ երկուսի միաձույլով:

Ի. Կամտը նշում է. «Վեհությունը գտնվում է ոչ թե բնության որևէ իրի մեջ, այլ միայն մեր հոգում»[14], իսկ Զերնիշենսկին այլ կերպ է ընդգծում երեւույթը՝ վեհի հատկանիշը դիտելով. «Վեհը այն է, ինչը առավել մեծ է, առավել ուժեղ այն մուս երևույթներից, որոնց հետ մենք համեմատում ենք»[15]:

Այս քննությունից Աննայի սերն է հղորդ, վեհություն կրողը, հավեյալ արժեքը՝ մնացած զարմանահրաշ առաքինությունները, որով պատկած է:

Գեղարվեստական երկի գիխավոր հասկանիշներից՝ գեղեցիկի, վեհի որակային դրսեւորումները տիպական են Գարեգինի եւ քոյր-Աննայի հոգեկերտվածքներին, բնավորության ընդգծված արտահայտություններին, որոնցից շահում է վեպը:

«Խորհրդավոր միանձնուիհի» երկում ողբերգականի շեշտադրումը նկատելի է այն դիտանկյունից, երդ Ն. եւ շրջակա գյուղերի բնակիչներից պաշտպած, անչափ սիրված քոյր-Աննան հեռանում է երկրային կյանքից՝ չնայած անծնուրացությամբ պսակված այդ հեռացումը հումանիստական, մեկնողական շերտեր ունի թե՛ հեղինակի եւ թե՛ դրանցից բխող Գարեգին-Աննա հերոսների մոտ՝ հաստատելով, թե մի հատիկի մահով կվերընծուղվեն ցորյանի այլ հատիկներ, եւ կյանքը կշարունակվի, կիմաստավորվի՝ սկսած լուսավորչական, բարեկրթական, առաջադիմական գործը, հետևորդներ կումենա, կիավերժի արժանավոր գործողների կողմից հանձին մեծ գաղափարակիր

## ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

սերմնացանի՝ Աննայի, անձանձիր տքնության ու նրա մեջ սիրո՝ անձնուրաց գաղափարակիր Գարեգինի առաքելության:

Սուրացանի գեղեցկապաշտությունը, վեհը, օգտապաշտականը, անհավատալին, երեւակայականը արժեքավոր որակներ են կազմում վեպում:

Ծ. գավառական քաղաքում լավագույնս բարեկրթված, Ն. եւ շրջակա գյուղերի բնակչների հասարակական եւ բարյուական հաստատությունները ամուր հիմքերի վրա դրած Աննայի Վարդը նաեւ օգտապաշտության եւ գեղեցիկի վար դրսեւորում է, որը կյանքի հարատեման հաստատուն եւ ամուր՝ բնադրատության կողմից անքնական դիտված, ռիթմն է: Այս տեսանկյունից քոյլ-Աննայի հեղափոխական վիրանքը հիշեցնում է շումերական քաղաքակրթության (XXV դար, մ.թ.ա) հուշարձաններից մեկը, որտեղ մարդկության պատմության մեջ կայացած առաջին վիճարանությունը շոշափում է գեղեցիկի, օգտակարի փոխհարաբերության հարցը՝ որպես գեղագիտական հիմնախնդիր:

Հուշարձանի տեքստը կոչվում է «Ամառը եւ ձմեռը, կամ Էնլիլը ընտրում է աստծուն՝ հողագործների հովանավորին»: Օդի աստված Էնլիլը երկրի վրա առատություն ստեղծելու նպատակով երկու եղբայրների է ստեղծում Էնեշին, որը ներկայացնում է Ամառը եւ Էնտենին. Վերջինս ներկայացնում է Զմեռը: Եղբայրները վեճ են սկսում իրար հետ, թե ով է իրենցից գեղեցիկը: <Այրը սկսած վեճը լուծում է հօգուտ ամենաօգտակարի. օդի տիրակալ հայր-աստված Էնլիլը որդիներին դիմելով՝ ասում է.

«Բոլոր երկրներին կյանք բերող ջրերը տրված են Էնտենին,

Ասստվածների հողագործին, որն արտադրում է ամեն ինչ:

Էնեշ, որդիս, իմացե՞ն դու կարող ես քեզ համեմատել քո եղբայր Էնտենի հետ:

...Էնեշը ծունկի եկավ Էնտենի առջև, դիմեց նրան աղոթքով»[16]:

Հիրավի հետաքրքիր է արտահայտված գեղագիտական մտահղացումը շումերական պատմագրական, բանահյուսական հուշարձանում:

Սուրացանի գեղարվեստի մտահղացումը վեպում լավագույնս է լուծված Աննայի կերպարում, որի Վարդաբանության մեջ հարաբերված են գեղեցիկը, օգտակարը, վեհը: Նա գործում է այդ սկզբունքների միաձույլով, առավել գործելակերպով գերազանցելով գործող մահկանացուներին, իր զարմանահրաշ Վարդով հիշեցնելով կյանքի հարատեմության տիեզերական մեծ խորհուրդը՝ առատություն, բոլոր երկրներին ջրեր բերող շումերների աստվածների հողագործի՝ Էնտենի առաքելությունը:

Հայ գրականության ընդհանուր ֆոնի վրա Մուրացանի՝ Արցախի թեման ներկայացնող «Խորհրդավոր միանձնութիւն» հանդիսանում է որպես գեղարվեստի ամկրկնելի նմուշ ու մշակութային, լուսավորչական, հեղափոխական գործի ուսուցարան:

Խորհրդավոր միանձնութիւն» երկում առաջադրված է Մուրացանի լուսավորչական, բարյուագիտական, կրթական, տնտեսական, գեղագիտական գաղափարները, որոնք կյանքի կոչելու արժեքավոր ու առաջադիմական ծրագրերը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մուրացան, Խորհրդավոր միանձնութիւն, Եթ, 5 հ-ով, հ. Երկրորդ, Եր., Հայպետհրատ, 1951, (այսուհետեւ՝ Մուրացան, Խորհրդավոր միանձնութիւն), էջ 136:
2. Ուլուբարյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, Եր., «Ա. Վարանդեան» հր., 1994 (այսուհետեւ՝ Ուլուբարյան Բ., Արցախի պատմությունը), էջ190:

## **ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2015**

3. Մուրացան, Խորհրդավոր միանձնուիի, էջ 97-98:
4. Ոլուբարյան Բ., Արցախի պատմությունը, էջ 191:
5. Մուրացան, Խորհրդավոր միանձնուիի, էջ 98:
6. Նույն տեղում:
7. Ոլուբարյան Բ., Արցախի պատմությունը, էջ 191:
8. Մուրացան, Խորհրդավոր միանձնուիի, էջ 98:
9. Ոլուբարյան Բ., Արցախի պատմությունը, էջ 191:
10. Նույն տեղում:
11. Մուրացան, Խորհրդավոր միանձնուիի, էջ 98:
12. Նույն տեղում, էջ 64-65:
13. Բլոկ Ա., Ըօբր. սоч. в 8-ми т., т. 5, М.-Л., 1962, стр. 315:
14. Կանտ Ի., Ըօբ. в 6-ти т., т. 5, М., 1966, стр. 272:
15. Չերնիշենսկի Ն., Էսթետիկա, Եր., 1959, էջ 281, տես Չերնիշենսկի Ն., Էսթետիկա, Եր., 1953:
16. Կրամեր Շ. Հ., Իстория начинается в Шумере, М., 1965, стр. 165:

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Մուրացանի «Խորհրդավոր միանձնուիի» խորհուրդը  
Չինադիմա Բալայան**

Հայ գրականության պատմության մեջ «Խորհրդավոր միանձնուիին» իր ինքնատիպ դրսեւորումներով, ներկայացրած գաղափարակարգով, ազգային լուսավորչական ծրագրերով, ազգության մարմինը բարոյապես կազդուրելու առաքելությամբ, Մուրացանի կողմից իր գաղափարակիր, անձնուրաց հերոսներին դեպի գյուղ՝ գործելու ասպարեզ մղելով, մի նպատակ է հետապնդում. շարունակելով 60-ականների նվիրական գործը՝ գյուղն ու գյուղացիությունը լուսավորելով, տղիտությունը հալածելով, եղած առողջ ավանդները պահպանելով՝ բարվոքել Վերջինիս անմիտիքար վիճակը, բարձրացնելով անկումից՝ կազդուրել նրա թույլ մարմինը՝ հասցնելով առաջադիմության եւ լուսավորության:

**Բանալի բառեր՝ XIX դար, Շուշի, Արցախ աշխարհ, մշակութային կյանք, կրթական համակարգ, 1860-ական թվականներ, սերունդ, եղիտասարդություն, բարոյական մարմին:**

**РЕЗЮМЕ**

**Смысл “Таинственной монахини” Мурацана**

**Зинаида Балаян**

“Таинственная монахиня” Мурацана в армянской литературе со своими типичными стремлениями, с представленной идеологией, с миссией морального восстановления нации, с программой просвещения нации преследует одну цель – продолжить дело 60-ых, просвещать село и сельчан, искоренить невежество, сохранить все здоровые традиции, вселять надежду в их безнадежное положение, поднять с низов, восстановить слабый организм нации.

**Ключевые слова:** XIX век, Шуша, Аրцахская земля, отрасли искусства, культурная жизнь, система образования, 1860-ые годы, поколение, молодежь, моральное оздоровление.

**SUMMARY**

**The meaning of “The Mysterious Nun” of Muratsan**

**Zinaida Balayan**

“The Mysterious Nun” by Muratsan in Armenian literature with its typical aspirations, ideology, with the mission of the moral recovery of the nation, with a program of education of the nation, pursues one goal – to continue the activity of the 60s, to educate the village and the villagers, eradicate ignorance, save all healthy traditions, to give hope to the desperate, to rise from the bottom, to recover weak body of the nation.

**Keywords:** XIX century, Shushi, Artsakh land, branches of art, system of higher education, the 1860-s, generation, young people, moral improvement.